

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №4 (33) 2017 Гуманитарные науки

ՀՏԴ 811.19 : 911.94 (479.25)

ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱՆՅՈՒԹԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ՝ ԱՅԼԱԼԵԶՈՒ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՎ ՀԱՄԱԼՐՎԱԾ ԽՄԲԵՐՈՒՄ
Լ. Կ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան, 0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail: lusine.mooradyan2011@yandex.ru*

Օտարախոս ուսանողներին հայերենը՝ իբրև օտար լեզու ուսուցանելիս բանավոր և գրավոր խոսքի յուրացմանը զուգահեռ կարևորում ենք երկրագիտական թեմաների ուսուցմանը միտված բազմաբնույթ աշխատառճը՝ համապատասխանեցված ընդահանուր ծրագրին և համամասնորեն բաշխված բոլոր դասաժամերի վրա: Նախապես հաշվի առնելով, որ երկրագիտական նյութն այս կամ այն ձևով պետք է աղերսներ ունենա լեզվագիտական նյութի հետ, փորձում ենք համապատասխանության եզրեր գտնել երկրագիտական նյութի և տվյալ դասաժամի դասանյութի միջև: Արտասահմանցի ուսանողների հայերենի դասաժամերին ուրույն տեղ ենք հատկացնում հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին, կյանքին ու կենցաղին վերաբերող թեմաներին, քանի որ անհնար է տիրապետել օտար լեզվին, առանց այդ լեզուն կրողի պատմությունն ու մշակույթը ճանաչելու և լեզվական նրբերանգները, լեզվի յուրահատկությունն ու գեղեցկությունը յուրացնելու:

Բանալի բառեր. արտասահմանցի ուսանողներ, օտար լեզու, լեզվական նրբերանգներ, լեզվի յուրահատկություն

Ներկայացված է խմբագրություն 25.01.2017թ

Արտասահմանցի ուսանողների հայերենի դասաժամերին ուրույն տեղ ենք հատկացնում հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին վերաբերող թեմաներին: Լեզուներ սովորեցնելու գործում հմտացած մարդիկ կհամաձայնվեն մեզ հետ այն առումով, որ անհնար է տիրապետել օտար լեզվին, առանց այդ լեզուն կրողի պատմությունն ու մշակույթը ճանաչելու և լեզվական նրբերանգները, լեզվի յուրահատկությունն ու գեղեցկությունը յուրացնելու: Ուրեմն արտասահմանցի ուսանողներին հայոց լեզու դասավանդելու առաջնահերթ խնդիրը ոչ միայն նրանց հայկական լեզվական միջավայրում ապրելու և հաղորդակցվելու համար պատրաստելն է, այլև մեր ժողովրդի մշակույթին, պատմությանը, սովորույթներին ու հոգևոր արժեքներին հաղորդակից դարձնելը:

Հայոց լեզվի ծրագրում բանավոր և գրավոր խոսքի ուսուցմանը զուգահեռ կարևորում ենք երկրագիտական թեմաների ուսուցմանը միտված բազմաբնույթ աշխատառճը՝ համապատասխանեցված ընդահանուր ծրագրին և համամասնորեն բաշխված բոլոր դասաժամերի վրա՝ հաշվի առնելով, որ երկրագիտական նյութը այս կամ այն ձևով պետք է աղերսներ ունենա լեզվագիտական նյութի հետ՝ այսինքն

համապատասխանեցնելով առավել հաճախ գործածվող կենդանի խոսակցական լեզուն մեր պատմությանը, մշակույթին վերաբերող թեմաներին, կյանքին ու կենցաղին: Նշենք, որ արտասահմանցի ուսանողները տարաբնույթ խմբերի են բաժանվում, նրանցից առանձնանում են սփյուռքահայ ուսանողները, որոնց համար մշակվում է առանձին ծրագիր, քանի որ տարաբնույթ են նրանց լեզվական և ֆոնային գիտելիքները մեր երկրի մասին: Ըստ այդմ, տարորոշում ենք թեմաների ընտրությունն ու կարևորությունը: Լեզվի ուսուցման առաջին իսկ դասից սկսում ենք երկրագիտական-հայրենագիտական գրույցների վարումը, իհարկե, առավելագույնս պահպանելով մատչելիության սկզբունքը: Յուրաքանչյուր նոր խումբ մտնելիս՝ դասախոսը միջնորդ լեզվի օգնությամբ սկսում է փոքրիկ ակնարկ-դասախոսություն հայոց լեզվի և հայերենի այբուբենի ստեղծման մասին: Հետագա դասաժամերին անցկացնում ենք փոքրածավալ գրույցներ, ինչպիսիք են <<Հայ ժողովրդի ծագումը>>, <<Հինգերորդ դարի հայ պատմիչները>>, <<Հայաստանի աշխարհագրությունը>>, <<Մասունցի Դավիթ>>, <<Հայ բժշկապետերը>>, <<Հայաստանի մայրաքաղաքները>>, <<Հայաստանի կլիման>>, <<1915թ-ի մեծ եղեռնը>>, <<Հայկական գաղթօջախներ>> և այլն: Միյուրքի հայ ուսանողների լեզվական, հայրենագիտական գիտելիքներին զուգահեռ ներկայացվում է նաև հայ գրականության և գրողների մասին ակնարկաշար: Խոստովանենք, որ միայն գրույցներով տաղտուկ կլինեք դասավանդումը, ուստի երկրագիտական-հայրենագիտական թեմաներ ուսուցանելիս, որպես մեթոդ-դասաձև, նախապատվությունը տրվում է էքսկուրսիաներին, որոնցով դասը ձեռք է բերում ճանաչողական-կիրառական արժեք: Կազմակերպվում են էքսկուրսիաներ դեպի Օշական, Էջմիածին, Մատենադարան, Ծիծեռնակաբերդ, Հայաստանի պատմության թանգարան, մշակույթի գործիչների տուն-թանգարաններ: Մեծ տեղ է տրվում բացիկների, ֆոտոալբոմների, տեսաֆիլմերի և սլայդների դիտմանը: Դասաժամերի սղության պատճառով արտալսարանային աշխատանքներն ավելի գերադասելի են: Դրանց ուսանողները մասնակցում են մեծ խանդավառությամբ: Մեր կողմից փորձ է եղել բեմադրել Հովհաննես Թումանյանի <<Ոսկի քաղաքը>> հեքիաթը: Ամբողջովին պահպանելով հնդկական կոլորիտը՝ հնդիկ, պարսիկ և արաբ ուսանողները հայերենով ներկայացնում էին իրենց դերակատարումները՝ յուրացնելով հայկական ժողովրդական լեզվամտածողությունը: Անմիջապես տառերի ուսուցումից հետո բեմադրված ներկայացումը նպաստում է կենդանի խոսակցական լեզվի հարստացմանը, ուսանողները յուրացնում են բազմաթիվ կայուն բառակապակցություններ, խոսակցական կաղապարներ, խոսքը հարստացնում դարձվածքներով, ասույթներով ու ասացվածքներով:

Այժմ 1-2 թեմայի դասվանդման մեթոդական սկզբունքների մասին: Դիցուք նախապատրաստվում է էքսկուրսիա դեպի Էրեբունի թանգարան: Նախապես ներկայացվում է պատմական փոքրիկ ակնարկ-դասախոսություն, Պ. Սևակի <<Էրեբունի-Երևան>> բանաստեղծության վրա կատարվում է բառային աշխատանք: Բացատրվում են **Էրեբունի, Երևան, Դվին, Անի, դարե կարոտ, քարե նագանք, Մասիս հայր, Արաքս մայր, անկատար կանչեր** բառերն ու բառակապակցությունները: Էրեբունի թանգարան այցելությունից հետո հանձնարարվում է բանաստեղծությունը և երգը սովորել անգիր: Հետագայում լավագույն ասմունքողներն ու երգողները ընդգրկվում են համերգ-միջոցառումներում: Ի դեպ, արտասահմանցի ուսանողները սիրով երգում են հայկական երգեր: Երգերի միջոցով լեզու սովորեցնելը նույնպես որևէ նոր լեզու սովորեցնելու մեթոդ է:

Բավականին հետաքրքիր թեմա է <<Բժշկությունը հին և միջնադարյան Հայաստանում>> թեման. չէ՞ որ բժշկությունը հին Հայաստանի մշակույթի անքակտելի մասն է եղել: Սնվելով ժողովրդական բժշկության ակունքներից՝ մեր մեծ բժշկապետերը մեզ են փոխանցել սերունդների դարավոր փորձն ու գիտելիքները՝ ներառելով բուսական և կենդանական աշխարհի, հանքային նյութերի բուժիչ հատկությունները: Ներկայացվում է

ակնարկ-դասախոսություն հեթանոսական Աստղիկ և Անահիտ աստվածուհիների մասին, որոնց ժողովուրդը պաշտում էր՝ իբրև բժշկության հովանավորների: 260 թ-ին հայ նախարար Սուրեն Սալահունու կինը բուժիչ հանքային աղբյուրների մոտ բորոտանոց է կառուցում, մինչդեռ նմանատիպ բորոտանոցներ Եվրոպայում հայտնվել են միայն երեք դար հետո: V-րդ դարի պատմիչ Ղազար Փարպեցին գրում է. <<Այնտեղ (Արարատյան դաշտում) շատ կան զանազան բույսերի արմատներ, որ ճարտար հմուտ, գիտուն բժիշկները օգտագործում են արագ բուժող ըմպելի դեղեր պատրաստելու համար>>¹: Միջնադարի հայ բժշկապետերից ներկայացվում են առավել ակնառուները՝ Մխիթար Հերացի, Ամիրդովլաթ Ամասիացի, Գրիգորիս, որոնք լրջորեն ուսումնասիրել են մարդու կազմությունը, կենսաբանության, դեղագիտության, հիգիենայի և բժշկական բարոյագիտության հարցերը: Տրվում է համապատասխան բառացանկ ու բացատրություն՝ նշված թեմայի շուրջ: Նմանատիպ դասաժամերը լեզվագագացողություն, լեզվական մշակույթ են ձևավորում, դրանք տարբեր բնագավառներին վերաբերող դասանյութերի շրջանակներում կապ են ստեղծում ձեռք բերած լեզվական գիտելիքների և խոսքային գործունեության միջև՝ լեզվական գիտելիքների ճիշտ կիրառման առումով: Այսպիսով, գիտելիքը գործնական կիրառություն է ունենում, որն էլ մեր գործունեության գերնպատակն էր: Աշխարհի հնագույն լեզուներից մեկի ուսումնասիրման և յուրացման գործում հզոր գործոն է դասավանդողի դերը, լուսաբանվող նյութը խոսքի հետ համադրելու կարողությունը, ուշադրության շեշտադրումը բովանդակային ու կարևոր պահերի վրա, էականը անկարևորից առանձնացնելու հմտությունը և նյութերը արհեստականորեն ներկայացնելուց խուսափելը. այսինքն՝ արհեստավարժ լինելը. չէ՞ որ մենք ներկայացնում ենք մեր հայրենիքի դիմանկարը: Արտասահմանցի ուսանողների հայերենի իմացությունը խորացնելու, մեր հայրենիքի մասին պատմական գիտելիքներ հաղորդելու և միջմշակութային կապերն ամրապնդելուն է միտված մեր <<Վանից մինչև Երևան>> ուսումնական տեքստերի ձեռնարկը:

Արտասահմանցի ուսանողների հետ տարվող երկրագիտական բազմաբնույթ աշխատանքները միտված են ժողովուրդների մշակույթների մերձեցման գործառնություն և մեր երկրի մասին տեղեկատվության մեծ աղբյուր են հանդիսանում:

Մեր ժողովրդի մշակույթին, պատմությանը, սովորույթներին ու հոգևոր արժեքներին հաղորդակից դարձնելը օգնում է դրական վերաբերմունք դաստիարակել մեր երկրի նկատմամբ: Վերադառնալով իրենց երկիր՝ նրանք տանում են ոչ միայն մասնագիտական և լեզվական գիտելիքներ, այլև սեր ու ջերմություն մեր ժողովրդի ու ազգային արժեքների նկատմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., II հատոր, Երևան, էջ 552:
2. Մանուկյան Ա., Խոսքի զարգացումը հայոց լեզվի ուսուցման ընթացքում, Երևան, 1969, 250 էջ:
3. Մուրադյան Լ., Սովորում ենք գրել, կարդալ, խոսել հայերեն, Երևան, Էդիթ Պրինթ, 2011, 284 էջ:
4. Մուրադյան Լ., <<Վանից մինչև Երևան>>, ձեռագիր, 69 էջ:
5. Lightbown M. P., Spada N., How languages are learned, Oxford University Press, 1998, 233 page.

¹ Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., II հատոր, Երևան, էջ 552:

РЕЗЮМЕ
ИЗУЧЕНИЕ МАТЕРИАЛОВ СТРАНОВЕДЕНИЯ В ГРУППАХ
С ИНОСТРАННЫМИ СТУДЕНТАМИ
Л. К. МУРАДЯН

Статья посвящена изучению материалов страноведения в группах с иностранными студентами. После приобретения способностей письма и чтения, учащиеся могут читать и переводить маленькие тексты, а также тексты материалов страноведения, которые включают в себя основные структуры языка и разговорные формулы, понимание структуры сложения армянских слов. Это может помочь иностранным студентам в процессе повседневной коммуникации и поможет обогатить знания иностранцев о нашей стране.

SUMMARY
LEARNING MATERIALS OF COUNTRY STUDIES IN GROUPS SUPPLEMENTED BY FOREIGN
STUDENTS
L. K. MOORADYAN

This article is about country study materials in the groups supplemented with foreign students. Following to acquisition of reading and writing skills, students can read and translate small texts, and the texts of country study materials, which include the basic structure of language and spoken formulas, understanding the structure of the Armenian addition of words and nuances of word creation. This can help foreign students in everyday communication and helps foreigners to enrich knowledge about our country.